


նիւթ ծծէ : Խողովակին դրսի ծայրը բոլորովին գոց կ'ըլլայ . միայն վերի ծայրը քանի մը հաստ ամենաբարակ ծակեր կ'ունենայ իրարու քով : Եւ ծակերը անոր համար են , որ ներսի պատրոյկէն ցնդած ջրածին կազը աս ծակերէն դուրս ելլէ : Ուստի կանթեղը վառելու համար ուրիշ բան պէտք չէ ընել , բայց եթէ պղնձէ խողովակը դրսէն ճրագի բոցով տաքցնել , որ պատրոյկին մէջէն կազը ծակերէն դուրս վազէ . ան ատեն ճրագին բոցը պէտք է ծակերուն դիմացը բռնել՝ ինչուան որ բռնակի ելած կազը :

Ինչպէս որ ըսինք՝ հեղուկէն կազ չելլեր՝ ինչուան պատրոյկը չտաքնայ . և որպէս զի վառելու համար ալ կազը ներսէն չգադրի ու միակերպ ելլէ , պէտք է որ խողովակին վերի ծայրը պզտիկ ծակերուն մէջտեղը պղնձէ հաստ թելի կտոր մը ունենայ , որ կանթեղին բոցը զինքը տաքցնելով՝ իրմէ ալ տաքութիւն պատրոյկին անցնի , որ կազը դիւրաւ ելլէ անկէ :

Եւ տեսակ կանթեղին վրայ քանի մը դիտելու բան կայ . այսինքն մէյմը որ պատրոյկը աղտոտելուն պէս պէտք է փոխել որ հեղուկը դիւրաւ կարենայ մէջէն քալել : Երկրորդ , հասարակ կանթեղի պէս բոցին վերայ ալ ապակէ խողովակ անցրնելով՝ լոյսը աւելի կը պայծառանայ : Երրորդ , կանթեղին մէջ հեղուկ լեցրնելու ատեն շատ զգուշութիւն պէտք է ընել որ ճրագ չմտեցուի . որովհետեւ սաստիկ ցնդական ըլլալուն յանկարծ կը բռնակի : Երրորդ , աւելի մեծ զգուշութիւն ընելու է որ որ և իցէ կերպով հեղուկին ընդունարանը կամ ուրիշ գոց շիշի մէջ եղած հեղուկը կրակի մօտ չտաքցուի . վասն զի տաքնալով շատ կազ կ'ելլէ , ու գոց տեղ ըլլալով՝ կրնայ պայթեցնել ամանը ու փամաներ ընել :

Եւ համառօտ բացատրութիւնը բաւական ըլլայ հեղուկ ջրածնի վրայ տեղեկութիւն մը տալու համար . և

թէ որ աս գիւտը աւելի կատարելաւ գործուի կամ թէ վրաննոր փոփոխութիւններ ըլլայ , մենք ալ ժամանակին կը ծանուցանենք :



ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հասի տեսակ ընտանի Բուշտաներ :

ՀԱՒԻ տեսակ թռչունները որչափ որ օգտակար են մարդուս՝ իրենց առողջարար ու ախորժահամ մտովը , հակիթներովն ու փետուրներովը , նոյնչափ ալ գեղեցիկ յատկութիւններ ունին որ կ'արժէ գիտնալն ու դիտելը : Իրեք ցեղ կը բաժնուին հաւի տեսակ թռչունները . այսինքն ընտանի , ջրային , և աղաւնիի տեսակ :

Ինտանի հաւերուն ցեղը ընդհանրապէս ծանրամարմին ու խիստ շատուոր են : Իրենց ընդհանուր յատկութիւններն ասոնք են . սովորաբար չոր գետնի վրայ կը բնակին , ու հողը ոտքով քրքրելով կամ ետ տալով՝ մէջը իրենց ուտելիքը կը փնտուեն , այսինքն հունտ , որդ , ճճի , և այլն : Իրեք ստամոքս ունին , մէկն ալ քարաձիկն է : Երուն կամ աքաղաղը ամենեւին թուխսի ջնստիր . իսկ էգը գետնին երեսը կոշտ բոյն մը կը շինէ ու հոն կ'ածէ հակիթները : Չագերը հակերթէն որ կ'ելլեն՝ փափուկ ու խիտ փետուրով մը ծածկուած են , ու այնչափ մեծցած կ'ըլլան որ շուտ մը իրենց մօրը հետ կը քալեն ու անոր ցցուցած կերակուրները կտցելով կ'ուտեն . սովորաբար ինչուան որ բոլոր փետուրնին չուսնի՝ իրենց մօրմէն չեն բաժնուիր : Բնաւորութիւն մը ունին որ հողուն մէջ կը տապալտրկին ու անով կը քթուրտին : Իրենց վազուածքը խիստ արագ է . մանաւանդ թէ երբոր մէկը իրենց ետեւէն վազէ՝ թռչելու տեղը վազելով կը փախչին ու թուփերու կամ խուլ-



1 Սիրամարդ : — 2 Հնդկահա : — 3 Տորբլինկի հա : — 4 Նդիպտահա : — 5 Ամուս քի
հա : — 6 Անդրկալի արաղաղ : — 7 Պանթամի հա :

ներու մէջ գլուխնին կը խոթեն կը պահուրտին :

Հոս դրուած պատկերին մէջ աս ընտանի հաւերուն գրեթէ ամէն գըլխաւոր տեսակները կան . բայց մենք աս անգամ միայն առջինին՝ այսինքն սիրամարգին համառօտ ստորագրութիւնը դնենք . ետքը մէկալներն ալ զատ զատ կը ստորագրենք :

Սիրամարգ¹ :

(Թ) Ի որ թռչուններուն մէջ ուժի տեղ գեղեցիկութիւն փնտուելու ըլլայինք, տարակոյս չկայ թէ սիրամարգը ամենուն թագաւորը պիտի սեպէինք . վասն զի մէկը չկայ անոնց մէջ որ բնութեան ձիրքերովը այնչափ զարդարուած ըլլայ՝ ինչպէս սիրամարգը : Եւ թռչունին սքանչելի տեսքը, կազմուածքին համեմատութիւնն ու ազնուութիւնը, ծանր ու վսեմ քալուածքը ամենուն աչքը իրեն վրայ դարձնել կուտան . ինքն ալ կարծես թէ կը հպարտանայ իրեն այնպիսի գեղեցիկութեանը վրայ, մանաւանդ երբոր տեսնէ թէ ուրիշները աչքերնին տընկած իր վրայ կը նային : Եւրօն երկու ոտքն ալ մէյմէկ բիտ՝ ունի : Ազը արուէն պզտիկ է, ու աւելի իր պոչովը կը տարբերի անկէ, որ ոչ արուին պոչին չափ երկայն է, և ոչ ալ անոր փայլուն ու ազնիւ գոյները և աչքի ձևով գեղեցիկ բծերն ունի : Առնրկին վրայի փետուրները մոխրագոյն սև են, ինչպէս նաև գլխուն վրայ զարդ ընող փետուրէ ցցունքն ալ՝ գրեթէ բոլոր մոխրագոյն է, բաց ՚ի մէկ քանի կանաչագոյն ու ոսկեգոյն բծերէ : Ա զին վերի կողմը ճերմակ է, իսկ վարի կողմը և կուրծքին փետուրները կանաչ են, ու ծայրերնին միայն ճերմակ է : Եւրօ սիրամարգին վրայ բնութե խիստ աղուոր գոյները կան, քի կանաչ, կապոյտ,

և ոսկեգոյն . և կարծես թէ ուրիշ գեղեցիկ գոյնագոյն թռչունները սիրամարգին փառաւորութենէն աւելցած գոյներովը զարդարուած են :

Սիրամարգին սքանչելի փետուրները, որ իրենց պայծառութեամբ՝ գեղեցիկ ու կենդանի ծաղիկներէն գերազանց են, գոյներնին կը նետեն, կամ թէ ըսենք՝ ծաղիկներուն պէս ալ կը թռուին ու ամէն տարի կը թափին : Սիրամարգը կարծես թէ իմանալով իր գլխուն եկածը, ան միջոցին երեսը կը պահէ, կը վախնայ դուրսը երևնալու, գոց ու մութ տեղուանք կը փնտուէ և հոն կը քաշուի ինչուան գարուն, այսինքն ինչուան որ նորէն առջի զարդարանքը գտնէ :

Իորձով գիտենք թէ անկարելի է որ արտաքին ձիրքերուն հետ միշտ մէկտեղ գտնուին նաև ներքին կամ մտաւոր փափաքելի կատարելութիւնները . և աս բանիս մեծ օրինակ է սիրամարգը . վասն զի ձայնը խիստ անախորժ է, և խիստ դժուար կը թռչի : Բնանալու համար ծառի վրայ կը դառի կամ տանիքի վրայ կը կծկըտի . հաւնոցներուն մէջ շատ անգամ բռնաւորի պէս տակն ու վրայ կ'ընէ հաւերը . տանիքներու վրայ ելլել կը սիրէ ու կ'աւրէ զանոնք . պարտէզներն ու ծաղկի ածուններն ալ անապատ կը դարձնէ :

Եւ գեղեցիկ թռչունին բուն հայրենիքը հիւսիսային Հնդկաստանն է, և անկէ Եւրոպա բերել տուողը մեծն Երթսանդր եղաւ կ'ըսեն : Այրենին ընտանեցածէն աւելի գեղեցիկ տեսք ունի . վասն զի ասոր կունակն ու թռչունը վրայ երկնագոյն է, պոչն ալ աւելի փառաւոր ու զարդարուն :

Տեսակ մը սիրամարգ ալ կայ, որ գլխուն ցցունքը աւելի երկայն ու խիտ է, և վիզը կանաչ և ոսկեգոյն :

Արի իրեք տեսակ սիրամարգ ալ կայ որ այնչափ մեծ ու այնչափ գեղեցիկ չեն : Ճերմակ սիրամարգը մեծ տարբերութիւն ունի հասարակէն ու մանաւոր ցեղ մըն է :

1 Լտ . Pavo. Գղ . Paon. Տճ . Թառսս Գոռնուս :
2 Մակնուղ :